ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«04» փետրվարի 2016 թվական N 19-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի ԹԻՎ 190-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ մասով, 5-րդ մասի 1-ին պարբերությամբ և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ոստիկանության Շիրակի մարզային վարչության պետի 2015 թվականի սեպտեմբերի 8-ի թիվ 69/2-2216 գրությունը, համայնքի ավագանին որոշում է.

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 12-ի «Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու մասին» թիվ 190-Ա որոշման հավելվածը լրացնել հետևյալ նոր 9-րդ կետով՝

«9. «Մանուկ Աշոտի Գորգինյան- Հայաստանի Հանրապետության Ոստիկանության Շիրակի մարզային վարչության Գյումրի քաղաքի Մուշի բաժնի անչափահասների գործերով բաժանմունքի պետ»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդ օրվանից:

Կողմ (13)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ(0)**
Գ. Ադամյան		
Ա. Բաղրամյան		
Ա.Գրիգորյան		
Հ. Խաչատրյան		
Հ. Կարապետյան		
Տ.Հովհաննիսյան		
Վ. Հունանյան		

Ն. Մեսրոպյան _____

Ռ. Մխիթարյան _____

Է. Մկրտչյան _____

Վ.Շիրինյան _____

Մ. Սահակյան _____

Տ. Փանոսյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«04» փետրվարի 2016 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«04» փետրվարի 2016 թվական N 20-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ մասերով և հիմք ընդունելով Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի կողմից կառուցապատման նպատակով առանձնացված հողամասերի օգտագործման սխեմաները և ներկայացված ելակետային տվյալները՝ **համայնքի ավագանին որոշում է .**

Գյումրի համայնքի սեփականությունը հանդիսացող, կառուցապատման նպատակով առանձնացված հողամասերն օտարել աճուրդով և հաստատել աճուրդի մեկնարկային գներն ու պայմանները՝ համաձայն հավելվածի:

	Կողմ (13)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ(0)**
Գ. Ադամյան			
Ա. Բաղրամյան			
Ա.Գրիգորյան			
Հ. Խաչատրյան			
Հ. Կարապետյան			
Տ.Հովհաննիսյան			
Վ. Հունանյան			
Ն. Մեսրոպյան			
Ռ.Մխիթարյան			
Է. Մկրտչյան			

Վ.Շիրինյան _____

Մ. Սահակյան _____

Տ. Փանոսյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Մ. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«04» փետրվարի 2016 թ.

Հավելված՝
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Գյումրի համայնքի
Ավագանու 2016 թվականի
փետրվարի 04-ի N 20-Ն որոշման

Ց Ո Ւ Ց Ա Կ

Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող առանձնացված հողամասերն աճուրդով օտարելու մեկնարկային գների և պայմանների

Հ/Հ	Հողամասի հասցեն /գտնվելու վայրը/	Ծածկագիրը մակերեսը քառ.մ	Հողամասի նպատակային և գործառական նշանակությունը	Հողամասի օգտագործման նպատակը	Հաստատված մեկնարկային գինը /ՀՀ դրամ/
1.	Դուդկոյի փող. N 4/1 11-րդ գոտի	08-001-0157-0009 41.4	Բնակավայրերի այլ հողեր	Սպասարկման օբյեկտի կառուցում	450 000
2.	Շչերբինայի փող. N 8/8 9-րդ գոտի	08-001-0364-0028 74.45	Բնակավայրերի այլ հողեր	Բնակելի տան կառուցում	200 000

Քաղաքաշինության և
ճարտարապետության բաժնի պետ՝ Ա.ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«04» փետրվարի 2016 թվական N 21-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆԻ ԹԱՂԱՄԱՍ 13-ՐԴ ՓՈՂՈՑ N 11/5 ՀԱՍՑԵԻ ԿԻՍԱԿԱՌՈՒՅՑ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նկատի ունենալով, որ Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Անի թաղամաս 13-րդ փողոց N 11/5 հասցեի կիսակառույց շինությունը (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 26082015-08-0020 վկայական) չի օգտագործվում համայնքի կարիքների համար և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Աճուրդով օտարել Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Անի թաղամաս 13-րդ փողոց N 11/5 հասցեի 405,12 (չորս հարյուր հինգ ամբողջ տասներկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով կիսակառույց շինությունը և կառուցապատման ու սպասարկման համար զբաղեցրած 08-001-0092-0009 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակությամբ 0.054243 (զրո ամբողջ հիսունչորս հազար երկու հարյուր քառասուներեք միլիոներորդական) հեկտար մակերեսով հողամասը:
2. Հիմք ընդունելով «Պ.Ա.Գ. Էսթեյթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության սույն որոշման 1-ին կետում նշված գույքի շուկայական արժեքի գնահատման վերաբերյալ 2016 թվականի հունվարի 22-ի թիվ-006 հաշվետվությունը՝ հաստատել աճուրդի մեկնարկային գինը՝ 1 980 000 (մեկ միլիոն ինը հարյուր ութսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

	Կողմ (13)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ(0)**
Գ. Ադամյան			
Ա. Բաղրամյան			
Ա.Գրիգորյան			
Հ. Խաչատրյան			
Հ. Կարապետյան			
Տ.Հովհաննիսյան			

Վ. Հունանյան _____

Ն. Մեսրոպյան _____

Ռ.Մխիթարյան _____

Է. Մկրտչյան _____

Վ.Շիրինյան _____

Մ. Սահակյան _____

Տ. Փանոսյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«04» փետրվարի 2016 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«04» փետրվարի 2016 թվական N 22-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՆԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ԳՅՈՒՄՐԻ-1 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺՆԻ ՏԵՂԱԿԱՅՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՏԱՐԱԾՔ ՎԱՐՁԱԿԱԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի առանձնացված ստորաբաժանում Գյումրի-1 սոցիալական աջակցության տարածքային բաժնի տեղակայման նպատակով, հիմք ընդունելով Գյումրի-1 սոցիալական աջակցության տարածքային բաժնի պետ Նելլի Սարգսյանի գրությունը (համայնքապետարանում մուտքագրված՝ 2016 թվականի հունվարի 19-ին N 561 թվագրմամբ)՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Տալ համաձայնություն՝ Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի առանձնացված ստորաբաժանում Գյումրի-1 սոցիալական աջակցության տարածքային բաժնի տեղակայման նպատակով վարձակալելու «Գյումրու Կարա-Մուրզայի անվան պետական երաժշտական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպության օգտագործման տակ գտնվող, Ղուկասյան փողոցի N 30 հասցեի ուսումնական շենքից փաստացի առանձնացված 203.74 (երկու հարյուր երեք ամբողջ յոթանասունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով տարածքը՝ 1 (մեկ) տարի ժամկետով: Տարածքի վարձակալության ամսական վարձավճար սահմանել 42000 (քառասուներկու հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Լիազորել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի առանձնացված ստորաբաժանում Գյումրի-1 սոցիալական աջակցության տարածքային բաժնի պետ Նելլի Սարգսյանին՝ օրենքով սահմանված կարգով կնքել վարձակալության պայմանագիր:
3. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված գույքի վարձակալության վարձավճարի վճարումը:

	Կողմ (13)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ(0)**
Գ. Ադամյան			
Ա. Բաղրամյան			
Ա.Գրիգորյան			

Հ. Խաչատրյան _____

Հ. Կարապետյան _____

Տ.Հովհաննիսյան _____

Վ. Հունանյան _____

Ն. Մեսրոպյան _____

Ռ.Մխիթարյան _____

Է. Մկրտչյան _____

Վ.Շիրինյան _____

Մ. Սահակյան _____

Տ. Փանոսյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«04» փետրվարի 2016 թ.